ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ա. ԱՎԱԳՅԱՆ

01.09.2022թ.

Բյուրեղավանի Ս. Վարդանյանի անվան ավագ դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա դասղեկի աշխատանքային պլան 5-րդ դասարան

Դասղեկ՝ Ս. Կնյազյան

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը) 5-րդ դասարանում սովորում են 27 աշակերտ՝ 18 աղջիկ և 9 տղա: Դասարանում ձևավորված է առողջ կոլեկտիվ, բոլոր աշակերտները ակտիվ են, ներգրավված են դասապրոցեսներին, աշխույժ են: Բոլոր երեխաները իրար հետ ընկերաբար, սիրով, պատրաստակամ շփվում են, միմյանց արդեն լավ ճանաչում են:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացում. նախատեսվում է անցկացնել ամենշաբաթյա դասղեկի ժամեր՝ քննարկելու ուսման առաջընթացի և կազմակերպչական մի շարք խնդիրներ: Նախատեսվում է այցելություն մշակութային օջախներ, հոգևոր մշակութային կենտրոններ: Սեպտեմբերի 23-ին կազմակերպվել է <<Փոքրիկ իշխանը>> մուլտֆիլմի դիտում և համանուն գրքի քննարկում: Ուսումնական տարվա ավարտին նախատեսվում է էքսկուրսիա՝ Հայաստանի պատմամշակութային վայրերից որևէ մեկը:Ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման կարևորագույն միջոցը դասապրոցեսն է, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն ձևավորելու համար երեխաների արժեհամակարգում, նախատեսվում է հաճախ անդրադառնալ հայրենիքի, ընտանիքի, հասարակության կարևորությունը, բացատրել նրանց դերի և պարտականությունների մասին թե ընտանիքում, թե հասարակության մեջ:
Հոգևոր դաստիարակությունն սկսվում է հայրենիքի հանդեպ սիրուց:

3.2 Գեղագիտական դաստիարակության գործում առանձնակի կարևորել գրագետ, գեղեցիկ, հայեցի խոսքը, հայ և համաշխարհային մշակութային ժառանգության ճանաչողությունը, գեղարվեստական գրականության ընթերցումն ու քննարկումները:

3.3 Ռազմա-հայրնասիրական դաստիարակության գործում հաջողելու համար հաճախակի խոսել հայրենիքի համար սխրագործությունների, հերոսական քայլերի դիմած հայորդիներ օրինակներից, նրանց ճանաչելի դարձնելով ու հայրենաճանաչության միջոցով՝ արթուն պահել հայրենասիրությունը:

3.4 Ֆիզիկական դաստիարակության համար խրախուսել սպորտային պատրաստվածությունը, սպորտլանդիաներին և այլ նման միջոցառումներին երեխաների մասնակցությունը, խրախուսել ներգրավվածությունը սպորտային խմբակներին:

3.5 Աշխատանքային դաստիարակությունը զարգացնելու համար պետք է նախ բացատրել աշակերտներին դրա կարևորությունը, ապա կոլեկտիվ աշխատանքի կազմակերպման միջոցով ցույց տալ նրանց միասնական աշխատանքի արդյունքը:

3.6 Բնապահպանական դաստիարակությունը դպրոցականների և ժամանակակից մարդու դաստիարակության կարևորագույն տարրն է:Աշակերտը պետք է հասկանա մարդու և բնության կապը, պահի, փայփայի բնությունը, խելամիտ կերպով ծախսի նրա ռեսուրսները:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ կապը ձևավորվում է ծնողների և մանկավարժների համատեղ գործունեությունից:Ուսուցիչը չի կարող լիովին կազմակերպել երեխայի դաստիարակությունը, դրա համար շատ կարևոր է ծնող-աշակերտ-ուսուցիչ փոխլրացված կապը, որն ամրապնդելու համար կազմակերպվում են ծնողական ժողովներ, առանձին ծնողների հետ հանդիպումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Կարգապահություն: Նոր ուսումնական տարի:	01.09.22թ.	դասղեկ
2.	Գիտելիքի և դպրության օր:	01.09.22թ.	դասղեկ
3.	Սեպտեմբերի 21 ՀՀ Անկախության օր:	21.09.22թ.	դասղեկ
4.	Դասարանում հիմնական կոլեկտիվ ստեղծելու և համախմբվելու ուղիները:	26.09.22թ.	դասղեկ
5.	Աշխատանքային ռեժիմի, դասաժամերի տևողության, նոր առարկաների պահանջի մասին:	03.10.22թ.	դասղեկ
6.	Կազմակերպվածության, կարգապահության խնդիրը դասարանում:	10.10.22թ.	դասղեկ
7.	Աշակերտների պատրաստվածությունը, ինքնուրույնության ձեռքբերումը, պատասխանատվության ձևավորումը:	17.10.22թ	դասղեկ
8.	Հարգանքի ձևավորումը դիմացինի նկատմամբ:	31.10.22թ.	դասղեկ
9.	Համբերատարության, ընկերասիրության ձևավորում:	07.11.22թ.	դասղեկ
10.	<<Գնահատիր ինքդ քեզ>> նպատակն է ձևավորել արժեհամակարգ, կատարել ինքնավերլուծություն:	14.11.22թ.	դասղեկ
11.	Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին:	21.11.22թ.	դասղեկ
12.	Ներկայացնել ժամանակակից կյանքում լրատվամիջոցների դերը:	28.11.22թ.	դասղեկ
13.	Քաղաքացիական ինքնուրույն գիտակցություն, ինքնություն:	05.12.22թ.	դասղեկ
14.	Ապագայի ծառ	12.12.22թ.	դասղեկ
15.	Ինքնաճանաչում, ինքնակրթություն:	19.12.22թ.	դասղեկ
16.	Պատասխանատու քաղաքացի:	23.12.22թ.	դասղեկ
17.	Կոնֆլիկտների հաղթահարում:	09.01.23թ.	դասղեկ
18.	Գիտության, տեխնիկայի և արվեստի մասին:	16.01.23թ.	դասղեկ
19.	Պետք է արդյոք խնայել:	23.01.23թ.	դասղեկ
20.	Մասնագիտական կողմնորոշում:	30.01.23թ.	դասղեկ
21.	<<Եկեղեցին և ազգը>> քննարկում:	06.02.23թ.	դասղեկ
22.	Բնական պաշարների զրաղետ, խնայողաբար օգտագործում:	13.02.23թ.	դասղեկ
23.	Պահպանենք բնությունը:	20.02.23թ.	դասղեկ
24.	Էկոլոգիական հիմնախնդիրներ:	27.02.23թ.	դասղեկ
25.	Գեղեցիկի միջոցով դեպի մարդկայինը:	06.02.23թ.	դասղեկ
26.	Ավելի շատ, ավելի քիչ, հավասար:	13.03.23թ.	դասղեկ
27.	Ազնվություն, ճշմարտախոսություն:	20.03.23թ.	դասղեկ
28.	Ինչպես հիմնավորել պատասխանը:	03.04.23թ.	դասղեկ
29.	Ինչպես կազմակերպել ասելիքը:	10.04.23թ.	դասղեկ
30.	Դպրոցն ամենից առաջ գիրք է:	17.04.23թ.	դասղեկ
31.	Պահանջը ներկայացնելու ճանապարհը:	24.04.23թ.	դասղեկ
32.	Կյանքից էլ թանկ:	03.05.23թ.	դասղեկ
33.	Փոխադարձ վստահություն:	08.05.23թ.	դասղեկ
34.	Երեխաները պետք է ապրեն ստեղծագործության մեջ,	15.05.23թ.	դասղեկ